ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

«Մուրճի» անցեալ համարում մենք տեսանք, թէ ինչպէս պ. Աղայեվը դառն արտասուքներ էր թափում, որ մահմեդականները մոռացել են դուրանը, չեն կարդում այն։ Եւ այդ սարսափելի զանցառութեան հետևանքը, Աղայեվի հաստատելով լինում էր այն՝ որ «զայլի բնաւորութիւն ունեցող մահմեդականները զառնուկի մորթի մէջ էին մտնում»: Նախիջևանի և շրջակայ գաւառների սիրտ կտրատող, հանրածանօթ դէպքերից յետոյ, որոնք ցոյց տուին թէ թաթարները իսկապէս ոչ աստիճան «գառնուկի» մորթի մէջ էին մտել, մենք ցաւով ու ապշութեամբ մտածում ենք. ինչ կը լինէր այն ժողովուրդների վիճակը, որոնք դժբախտութիւնն ունեն մահմեդականների հետ խառն ապրելու, եթէ այդ անխնայ կոտորող, թալանող, հրդեհող «գառնուկները» Աղայեվի երազած գայլերը դառնային! Բայց Աղայեվը կարող է այժմ հրճուել, որովհետև իր ցանած սերմերը լաւ են աճել. «Կասպիից» սկսած մինչև «Շարքի-Ռուս», նա շարունակ համիսլամութեան թոյնն էր ներարկում մահմեդականների մէջ, նա անդադար քարոզում էր կրօնակիցներին դառնալ գայլ, արիւնարբու գազան. ինչպէս անցեալ համարում տեսանք, նա քօղարկուած ձևերով հասկացնում էր մահմեդականներին թէ «նրանց աշխարհը» նրանց ձեռքից յափշտակել էին... Ո՞վ էր յափշտակել, այդ արդէն շատ պարզ է...

Մենք Աղայեվի յօդուածի մի մասն էինք տուել, խոստանալով միւսը այս անգամ առաջ բերել. մենք այդ խոստումը անկատար պիտի թողնենք, նախ, որովհետև Աղայեվ իր նոյն յօդուածի շարունակութեան մէջ նոր բան չի ասում, ծանրանում է իր նախորդ ասածի վրայ տարբեր դարձուածքներով, ուզում է ապացուցանել թէ մահմեդականների փրկութիւնը դուրանի մէջ է միայն, թէ մահմեդականները կարող են առաջադիմել (?) միմիայն դուրան կարդալով. նա դարձեալ նենգաւոր ակնարկներ է անում թէ մահմեդականները անունով մի-

այն մահմեդական են, թէ նրանք չեն ցոյց տալիս այն մարտական, ռազմիկ ոգին, որով կը տենչար վառուած տեսնել նրանց. օրինակ նա մի տեղ գրում է.

«Այնպիսի անուններ ենք կրում, որոնք երբէք մեր մէջ փաստերով գործերով չեն արտայայտուում. ինչպէս Ռուքն Էդդին—կրօնի վիմաքար—Սէյֆ Էդդին—կրօնի սուր—Հայն Հայն...»

Այսքան համարձակ գրգռումներից յետոյ, պարզ է թէ Աղայեվի անանձ քարոզները իրանց արդիւնքը պիտի տային։ Եւ դեռ ևս Աղայեվը քաջութիւն ունի արիւնոտ դէպքերի պատասխանատու համարել հայերին...

Երկրորդ պատճառը, որով մենք Աղայեվի յօդուածի—իր ընդհանուր ոգուն մէջ արդէն մեզ յայտնի—շարունակութիւնը զանց ենք առնում, այն է, որ մեր ընթերցողներին ներկայացնելու այլ, և գերազանցապէս շահագրգիռ բաներ ունենք։ Մեր ձեռքի տակ ունենք արտասահմանի իսլամ պարբերական հրատարակութիւններից մէկի «Ինթիհատ»-ի № 4-ը, ուր կայ մի այսպիսի տոկումէնտ։ Ռուսաստանի մահմեդականները մի տեղեկագիր են կազմել այն հարստահարութիւնների մասին, որ կրում են ռուս կառավարութեան կողմից։ Այդ տեղեկագիրը մահմեդականները ներկայացրել են ոչ միայն ռուս կառավարութեան, այլ և ուղարկել են բոլոր օտար պետութիւններին, ինչպէս Թիւրքիային, Գերմանիային, Ամերիկային, Աւստրիային, Անգլիային, Իտալիային, Ֆրանսային և Նոյնիսկ Ճապոնիային։

Արտասահմանի յիշեալ օրգանը տպագրել է այդ տեղեկագրի էական մասերը և իր կողմից աւելացրել է մի շարք խորհրդածութիւններ, որոնք այնքան էլ փաղաքշական չեն դանգատուող մահմեդականների համար։

Ահա այդ դոկումէնտը նոյնութեամբ։

Ռուսաստանի մահմեդականները

Ռուսաստանի մահմեդականների՝ ռուս կառավարութեան կողմից կրած հարստահարութիւնների մասին մի երկար տեղեկագիր ստացանք, որի մի քանի հատուածները ի ստորև առաջ ենք բերում։

«Այնպիսի մի ժամանակ, երբ առհասարակ ամենքը օգուտ են քաղում կարծիքների ազատութիւնից, ինչու համար Ռուսաստանի մահմեդականները զրկուին այդ ազատութիւնից։ Ռուսաստանի մահմեդականների ամեն տեսակ իրաւունքները

ոտնակոխ են եղել և հետզհետէ լինում են։ Ռուսաստանի մահմեդականների հոգևոր գործերի վարումին և հոգևոր կալուածների (վակֆ) կառավարումին համար ժամանակով առանձին վարչութիւն հաստատուած և նրանց մի շարք արտօնութիւններ շնորհուած էր թէև, բայց, այսօր, ռուս կառավարութիւնը՝ հակառակ քսաներորդ դարու ներկայ քաղաքակրթութեան, իսլամական իրաւունքները բռնաբարելու և ընաջինջ անելու վրայ է։ Հետևաբար, մահմեդականների բռնաբարուած իրաւունքներից մի քանիսը յիշատակում ենք հետևեալ կերպով։

«Առաջին.—Եկատերինա Երկրորդ կայսրուհու օրով՝ 1787 թուին մահմեդականների հոգևոր գործերի կառավարութեան և սրբազան շէրաաթի հիման վրայ դատաստան տեսնելու նպատակով Ուֆա քաղաքում մի կրօնական դատարան հաստատուեց. այս դատարանի համար հոգևորականներից մի մուֆթի (կրօնական դատաւոր) և երեք դաղի ընտրուեց մահմեդականների միջև տեղի ունենալիք խնդիրների, վէճերի լուծման, և մզկիթների և մէդրէսէների տնօրինութեան և կառավարման և ամուսնական և ապահարզանի և ժառանգութիւնների բաժանման նման դատերի քննութեան և կարգադրման համար։

«Մուֆթին այդ դատարանի նախագահ լինելու պայմանով՝ միւս երեք դաղիններն էլ միասին պիտի ընտրուէին Կազանի մահմեդականների միահամուռ հաւանութեամբ։ Այդ դատարանի իրաւասութիւնը, ինչպէս և նրա անդամների զուտ մահմեդական հոգևորականներից ընտրուելը՝ պետութեան անհրաժեշտ օրէնքով վճռուած էր։

«Երկրորդ.—Ղրղզների և կազակ ցեղերի մէջ իսլամական աստուածայայտ կրօնի ուսուցման համար մահմեդական ուսուցիչներ ուղարկուելու մասին 1792 թուին կայսերական մի հրովարտակ շնորհուած էր։ Բուխարայի և Խիվայի կողմից գաղթելով Սիբիրիա հաստատուած մահմեդականներին աւելի ընդարձակ արտօնութիւններ տրուած էին. նրանք անձնական և առևտրական տուրք չպիտի վճարէին։

«Երրորդ.—Ղրիմի մահմեդականների համար էլ մի հոգևոր առանձին դատարան բացուած էր և նրանց բոլոր կրօնական գործերի կարգադրութիւնը ինչպէս և հոգևոր կալուածների մատակարարութիւնից գոյացած հասոյթը յօգուտ ազգի և ազգային դպրոցների և մէդրէսէների ծախսուելը յիշեալ դատարանի իրաւասութեան պատկանում էր։ Ղրիմի իսլամ զինուորները պէտք է առանձին գունդ կազմէին և միայն Ղրիմի թերակղզու սահմաններում ծառայէին. նրանք Ռուսաստանի

այլ մասերը չպիտի ուղարկուէին և պիտի ունենային իրանց յատուկ իմամները։

«Զորրորդ.—Ամբողջ Ռուսաստանի մահմետականները կրօնական ազատութիւն և ռուսների համահաւասար իրաւունքներ պիտի վայելէին։ Այստեղ յիշուած իսլամական իրաւունքներից գոնէ մի քանիսը եթէ պահպանուած լինէին, ի հարկէ դրա փոխարէն մահմեդականները մշտապէս կատարեալ հաւատարմութեամբ կառավարութեան պիտի հնազանդէին։ Մինչդեռ 93 թուից սկսած՝ կայսերական հրամանով առաջարկուեց մուֆթիներին ընտրել ռուս բարձր դպրոցներից շրջանաւարտ անձերից։ Իսկ ռուսական այդ դպրոցները աւարտած անձերը առհասարակ իսլամ կրօնագիտութիւնից անտեղեակ են։

«Վերջերս առաջարկուեց նոյնպէս, որ Օրէնբուրգի կրօնական դատարանի անդամներն էլ անպատճառ ռուսերէն իմանան և այդպիսով ջնջուեց իսլամ ժողովուրդի մուֆթիներ և դազիներ ընտրելու իրաւունքը։ Կառավարութիւնը ինքը անձամբ ընտրում է, և ընտրում է ազէտ անձերին իբրև մուֆթի և դազի։ Կառավարութիւնը սրանով էլ չբաւականանալով՝ ժառանգութեան բաժանման հարցերը Օրէնբուրգի իսլամ հոգևոր դատարանի իրաւասութիւնից խլելով՝ քաղաքային դատարաններին յանձնեց։ Կասկած չկայ, որ շուտով ամուսնական և ապահարզանի վերաբերեալ դատերն էլ կը յանձնուի քաղաքական դատարանի։ Նոյնիսկ սրանից մի քանի տարի առաջ Օմսկից մի բարձրաստիճան ռուս պաշտօնակատար Ակմոլա նահանգի Գեօկչէտավ (?) քաղաքը գալով ոստիկանութեան միջոցով բոլոր մահմետական կազակներին հաւաքեց ռուս եկեղեցում և նրանց ասաց. «Այսօրուանից սկսած՝ դուք այլ ևս չպիտի հետևիք Ղուրանի պատուէրներին. ահա ձեր սուրբ գիրքը։» Եւ նրանց իւրաքանչիւրին մի մի Աւետարան բաժանեց։ Ցետոյ խօսքն ուղղելով նրանց իմամներին աւելացրեց. «Մահմեդականներդ այսուհետև շարիաթի օրէնքով չպիտի ղեկավարուէք բնաւ. նրա անունն անգամ չպիտի արտասանէք։ Վերջապէս դուք չպիտի խառնուէք ամուսնական, ամուսնալուծական և երդմնեցնելու հարցերում։»

1864-ից սկսած՝ դպրոցների և մէդրէսէների կառավարութեան իրաւունքը կրօնական դատարաններից խլուելով ժողովրդական լուսաւորութեան Նախարարութեան յանձնուեց։ Մինչդեռ մեր դպրոցներն ու մէդրէսէները մասնաւորապէս կրօնական գիտութիւն ուսուցանելու սահմանուած են։ Իսկ լուսաւորութեան մինիստրութեան մէջ մահմեդական լեզուին ծանօթ մի հոգի անգամ չկայ։ Իսլամ դպրոցների յառաջա-

դիմութեան և պահպանութեան համար քառասուն տարուց ի վեր ոչինչ չէ արած։ Մի քանի նահանգներում երբեմն հազիւ հազ մի քննիչ գալով՝ առաջարկում է դպրոցներում ռուս լեզուի ուսուցումը։ Եւ երբ ժողովուրդը այդ առաջարկը չի ընդունում, նա՝ դպրոցները փակելով հեռանալուց բացի ոչինչ չէ անում։ Այս կերպով մեր մի քանի կրօնական դպրոցները փակեցին։ Ռուս կառավարութեան դիտաւորութիւնը այս մասին՝ միմիայն մեր մէդրէսէներում ռուս լեզուն ներմուծելն է։ Տարօրինակ է, որ մինչդեռ ռուս բոլոր դպրոցների ծախքը լուսաւորութեան մինիստրութիւնն է հոգում, և նրանց հոգևոր դպրոցների վարչութիւնը հոգևորականների ձեռքին է, մեր դպրոցները թէ մեր ձեռքից խլելով յանձնում են լուսաւորութեան մինիստրութեան, թէ չեն հոգում նրանց ծախքերը և թէ նոյնիսկ մեր դպրոցներում ռուսերէնի ուսուցման հարկաւոր եղած ծախքերը մեզ են առաջարկում վճարել։ Բացի այդ՝ առաջարկւում է գիւղական հասարակութեան իմամներին ռուսերէն կարդալ գրել իմանալ։ Բայց միթէ՞ հնարաւոր է տասնևհինգ տարի մէդրէսէներում ուսանելուց յետոյ, ռուս նախնական դպրոցները յաճախելով ռուսերէն սովորել։ Եթէ նոյնիսկ իսլամ հոգևորականները այդ մտքով դիմում անեն, այդ կարգի ուսումնարանների կանոնագրութեան համաձայն չեն կարող ընդունուել։ Հետևաբար, ռուս կառավարութիւնը շատ լաւ իմանալով որ իմամները ռուսերէն սովորելու անկարող են, պահանջում է որ ռուսերէն չիմացողը իմամ չլինի, որով ձգտում է իմամութիւնը բոլորովին ջնջել։ Այս պատճառով մահմեդականների մեծամասնութիւնը նախընտրելով գաղթել, վաղուց ի վեր ցիր ու ցան լինելու վրայ է։ Մի մեծ մասն էլ օսմանեան կառավարութեան երկիրը գաղթելով՝ խալիֆէի բարձր հովանաւորութեան տակ մտած և ասպնջականութիւն վայելած են։ Ռուս կառավարութեան վերոյիշեալ վատ դիտաւորութիւնը՝ այժմեան ռուսական Սինոդի նախագահ Պոբիեդոնոսցէվի և Կազանի համալսարանի տնօրէն՝ Իլմինսկիի միջև փոխանակուած գրագրութիւնից և մամուլի մէջ լոյս տեսած լուրերից և թղթակցութիւններից աւելի ակնյայտ դարձաւ։ Բուխարայի և Խիվայի կողմերից Սիբիրիա գաղթած մահմեդականներին՝ ժամանակով շնորհուած արտօնութիւնների հետքն անգամ չէ մնում։ Սրանց սեփականութիւնը եղող ամբողջ հողերին կառավարութիւնը տիրացած է, և առևտրի վերաբերեալ արտօնութիւններն էլ ջնջուած են. նոյնիսկ Սիբիրիայի Վոլգա նահանգի մահմեդականների տանուտէրական (մուխթարիյէթ) վարչութիւնները ջնջուելով ռուս գիւղերի տանուտիրական վարչութիւնների մէջ

մոցնելու մասին որոշում կայացրել են և հարկ եղած գործողութիւնները կատարել են. այս պատճառով էլ նոյն մահմեդականները ստիպուել են դաղթել և իրանց կողմից փոխանորդներ ուղարկել են Կ. Պոլիս։

«Իսկ ինչ վերաբերում է Ղրիմի մահմեդականներին, սրանց մէջ էլ մուֆթիի պաշտօնը ջնջուելով՝ կառավարութեան կողմից ընտրուած տգէտ անձերի միջոցով փոխանորդաբար կառավարուում են, իսկ հոգևոր կալուածները ամբողջապէս կրօնական ատեանից խլուելով ռուս պաշտօնէութեան յանձնած են. սրանք էլ՝ գանձուած հասոյթը՝ դպրոցների և մէդրէսէների օգտին չյատկացնելով՝ վատնելու վրայ են։ Ներկայումս, հոգևոր կալուածների վարչութեան մօտ կէս միլիոնից աւելի փող գտնուելով հանդերձ, մի կոպէկը յօգուտ իսլամութեան չծախսուելուց զատ, ընդհակառակը ամբողջը ռուսների կողմից իւրացրուած է։ Զինուորները՝ հակառակ օրինաց, ցրուել են բոլոր գաւառներում. էսկադրոնի իմամները անունով միայն գոյութիւն ունին, հետևաբար սրանք էլ ճնշումներին անկարող լինելով դիմանալ, ամբողջովին դաղթել են։

«Այժմ դանք մահմեդականների կրօնական ազատութեան և ռուսների հետ հաւասար իրաւունքներ վայելելու հարցին։

«Քաղաքներում, կառավարական օրէնքների հիման վրայ դումայի վարչութեան անդամների թուի 3/4-ը ռուս պէտք է լինի։ Բայց նոյնիսկ Սեմիպոլատի նման քաղաքներում, չնայած որ մահմեդականները կազմում են մեծամասնութիւն, քաղաքային վարչութեան անդամների թուի 3/4-ը դարձեալ ռուս են։

«Երբ մահմեդականները ամեն տեսակ տուրքերը ռուսների հետ հաւասար են վճարում, այլևս ի՞նչ միտք ունի այս օրէնքը։ Ռուսական դպրոցներում մահմեդական աշակերտների համար մի կրօնուսոյց անգամ չկայ, մինչդեռ ռուս աշակերտների համար ամեն դպրոցներում կրօնքի ուսուցիչ կայ։ Ռուսների բարձրը հոգևորականները ռոճիկ են ստանում. կառավարութիւնը նպաստ է տալիս դպրոցներին. մեր ոչ հոգևորականներին և ոչ էլ դպրոցներին պաշտպանութիւն ցոյց չտրուելուց բացի, նոյն իսկ մեր իմամները զինուորական ծառայութիւնից ազատ չեն կացնում. մզկիթի մէջ այսօր իմամութիւն անողը՝ էգուց զինավարժութեան է կոչւում, եթէ պահեստի կամ մուսթահաֆիզ (պահեստից յետոյ կանչուող) զինուոր է. պաշտօնական ոչ մի տուրքից էլ ազատ չէ կացնում. բացի դրանից՝ Ռուսաստանի 40,000 մահմեդականներին՝ կառավարութիւնը բռնի՝ քրիստոնեայ անունը տուել է. այս մարդիկը հակառակ սերնդից սե-

բունդ մահմեդական լինելուն, կառավարութիւնը ճնշումներ է գործ դնում նրանց բռնի քրիստոնէացնելու համար։

«Ռուս կառավարութիւնը Կովկասի և Դաղստանի մահմեդականների թէ անհատական և թէ հասարակական իրաւունքները բնաւ ուշադրութեան չառնելուց, և նրանց առաջ, հոգևոր գործերում, ամեն տեսակ խոչընդոտներ յարուցանելուց զատ, կրօնական հարցերի և դաւանական պահանջների մէջ ևս իր ոտնձգութիւնները չափ ու սահմանից անց է կացնում։ Մինչդեռ ամեն տեղ, ամեն երկրում կրօնքի ազատութիւնը ապահովուած է, ռուս կառավարութիւնը բաց արձակ մահմեդականներին արգելում է աղօթել և նրանց աղօթատեղիները անասունների և մասնաւորաբար խոզերի բնավայր է դարձնում։ Իսլամ հոգևորականներից և շէյխերից շատերին աքսորել, անյայտ կորցնել, և ըստ ոմանց, սպանել է։ Ի միջի այլոց, սրբակրօն հոգևորականներից հաջի Արդ-իլ-Լաթիֆ էֆէնդուն՝ աքսորած և անյայտացրած է Հիջազ և Կ. Պոլիս ուխտի գնացած լինելուն պատճառով։ Կըմուկի կողմերում գտնուած մի քանի մահմեդական գիւղերում աւազակախմբեր բնակեցնելով՝ գիւղացիների հողերը բռնութեամբ յափշտակել և յիշեալ աւազակներին յանձնել է։ Եւ Գրբա քաղաքի շրջակայքում գտնուած մի քանի մահմեդական գիւղերը ամբողջապէս աւերելով՝ բնակիչներին Պարսկաստանի սահմաններն է աքսորել և նրանց տեղ յիշեալ աւազակախմբերին է բնակեցնում։ Այս մահմեդականների մի մասը չհանդուրժելով այդ անխնայ հարստահարութիւններին ապաստանել է խալիֆային։ Նուիրագործուած օրէնքների համաձայն՝ փոխանակ իւրաքանչիւր մահմեդականից տան համար տարեկան մի ռուբլի հարկ ստանալու, դիտմամբ, հարստահարելու նպատակով այժմ իւրաքանչիւր տնից երկու հարիւր ռուբլի պահանջելով՝ գանձելու ձեռնարկած է։ Որովհետև մահմեդականներին սպանողները փոքր կաշառքներով պատժից ազատուում են, մահմեդականներին սպանելու հաւարձակողների թիւը օրէց օր աւելանում է։ Մինչդեռ մի ռուսի կողմից ներկայացրած աղերսագիրը անմիջապէս ուշադրութեան առնուելով բաւականութիւն է տրուում նրան, մահմեդականը իր իրաւունքների պաշտպանութեան համար երբ խնդրամատոյց է լինում, բռնում են նրան, բանտարկում, և տուգանքի ենթարկում։ Մահմեդականների վրայ ճնշում և հարստահարութիւն գործ դնող անձերին կառավարութիւնը բաց արձակ պաշտպանում և հովանաւորում է։ Կառավարական այս թոյլտուութիւնից քաջալերուած՝ աւազակաբարոյ անձինք ամեն օր մահմեդականների պատիւն և ստացուածքը բռնաբարում են որևէ միջոցով...»

Այս տեղեկագրի տակ մահմեդական օրգանի՝ «Իջթիհադ»-ի խմբագրութիւնը հետևեալ շահագրգիռ խորհրդածութիւններն է աւելացնում։

«Մահմեդականներդ՝ ռուս կառավարութեան կողմից հարստահարութիւններ կրելնուդ մասին էք խօսում. բայց ի՞նչ օգուտ էք սպասում խօսելուց։ Եթէ մահմեդականները ճնշւում և հարստահարւում են, պատճառը նրանց մահմեդական լինելը չէ, այլ տգէտ և ծոյլ լինելը։ Ի՞նչ էք կարծում, այն խալիֆները որ գտնւում են մահմեդական կոչուած կառավարութեան տակ, նրանք պակաս ճնշումի և հարստահարութեան են ենթարկւում ձեր փառաբանած խալիֆայի կողմից։ Ռուսական կառավարութիւնը շարունակ ձգտում է, ասում էք, ձեզ ռուսերէն սովորեցնելու. վատ բան է անում։ Այդ դէպքում գոնէ ձեր չգիտցած ու չհասկացած թուղթի տակ ստորագրելուց ազատ կը լինէք։ Ռուս կառավարութիւնը ձեզնից զինուոր է առնում և ձեր հաւատակից եղբայրների վրայ սուր է քաշել տալիս։ Մի՞թէ ձեր խալիֆա յորջորջած Աբդ-իւլ-Համիդը միևնոյն բանը չի անում։ Եէմէնում մեր զօրքերի նահատակած արաբները մի՞թէ մահմեդական չեն։ Մի՞թէ նրանց մորթող զօրքերը մահմեդական չեն։ Այդ զօրքերի դերագոյն հրամանատարը այդ կեղծ խալիֆա Աբդ-իւլ-Համիդը չէ։ Մեր այդ արաբ հայրենակիցների և հաւատակիցների ապստամբութեան պատճառը մի՞թէ նրանց կրած ճնշումն ու հարստահարութիւնը չէ։ Գրում էք որ ձեր այդ տեղեկագիրը ուղարկել էք Գերմանիայի, Ամերիկայի, Աւստրիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Ճապոնիայի կայսր դեսպաններին... Հրեաներից աւելի ճնշուած ազգ չկայ Ռուսաստանում. բայց հակառակ նրանց կրած բոլոր հալածանքներին, մի՞թէ չէք տեսնում, թէ նրանք ի՞նչ դիրք ունեն գրաւած վաճառականութեան և արուեստների, ընկերութիւններ կազմակերպելու, բժշկութեան, երկրաչափութեան, փաստաբանութեան և այլ ամեն տեսակ ասպարէզների մէջ։ Ռուսաստանում 20 միլիոն մահմեդականներից քանի՞ հատ պրոֆէսէօր, քանի՞ բժիշկ, քանի՞ ընկերութիւնների տնօրէն, քանի՞ բանկիր կան։ Ռուս կառավարութիւնը հրէայ երկու սեռի աշակերտներին հազար տեսակ դժուարութիւններով է ընդունում գիմնազիաներում և համալսարաններում։ Պարիզի, Բերլինի, Լոնդոնի, Ժընէվի համալսարաններում երկու սեռից հազարաւոր ռուսահպատակ հրէայ ուսանողներ գիտութիւն և արուեստ են սովորում։ Օտար երկրներում ուսման դիմելու պատճառը Պետերբուրգի և Մոսկուայի համալսարաններում չընդունուելն է։ Իսկ մահմեդականների առաջ Ռուսաստանի բոլոր դրպ-

բոցների դռները բաց են. ինչու համար ձեր զաւակնե բին չէք ուղարկում այդ դպրոցները և ուսման տալիս։ Ինչու նրանց չէք ուղարկում Եւրոպա։ Եթէ ձեր զաւակներին թէ Ռուսաստանում և թէ Եւրոպայում ուսում առնել տաք, այն ժամանակ նրանք թէ կառավարական և թէ մասնաւոր գործերում կարևոր դիրքեր կարող են գրաւել և հարցը բոլորովին այլ կերպարանք կը ստանայ։ Հերիք խալիֆա, խալիֆա աղաղակէք. հերիք խալիֆայի երկիրը երազէք։ Աբդ-իւլ-Համիդ՝ խալիֆայի երկրին էլ, խալիֆայութեան էլ յարգն ու պատիւը խաղք, խայտառակ արեց։ Եւ բոլոր մահմեդականների կրած թշուառութիւնների իսկական պատասխանատուն՝ մեծ մասով՝ Աբդ-իւլ-Համիդը և Աբդ-իւլ-Համիդի նման օսմանցի դաւաճան սուլթաններն են։ Եթէ Աբդ-իւլ-Համիդը կրօնի և աղդի թշնամի, անխիղճ մի թագաւոր չլինէր, քան և ութ տարուայ ընթացքում Թուրքիան աւելի հաստատուն և քաղաքակիրթ մի պետութեան դրութիւնը կը ստանար։ Եւ մահմեդականներն էլ այն ժամանակ զօրեղ մի ապաստան, մի յենարան, դիտութիւնների աղբիւր կունենային... Այժմ Թիւրքիայի թագաւորը մի բուլղար իշխանաւորի առաջ դողդողում է։ Խնդրագիրներ և տեղեկագիրներ ներկայացնելով ի զուր ժամավաճառ մի լինէք, եղբայրներ։ Ուսում և փող վաստակեցէք։ Առանց գիտութեան փող շահել, առանց փողի ուսում առնել և առանց երկուսին ապատութիւն և իրաւունքներ ձեռք բերել և պահպանել անկարելի է։ Մահմեդական կառավարութիւնների՝ իրանց հպատակների վրայ գործ դրած հարստահարութիւնները, Ռուսաստանի՝ իր մահմեդական հպատակների վրայ գործ դրած հարստահարութիւններից շատ ու շատ աւելի են։ Ռուսաստանը զօրքին խողի միս է կերցնում ասում էք։ Աբդ-իւլ-Համիդ՝ իսլամ զօրքին՝ քաղցից, թշուառութիւնից մեռցնում է։ Եւ նրանց մնունդին յատկացրած փողով՝ իր անձի պահպանութեան համար գործ ածած լրտեսներին է պարարտացնում։ Օսմանեան երկրի ոչ մի մասում ապահովութիւն և արդարութիւն չկայ։ Թիւրք, հայ, քիւրդ, արաբ, յոյն և այլն ամենքը միմիանց մորթոտում են։ Այդ բոլոր խառնակութիւնների և թշուառութիւնների հեղինակն ու պատճառը իսլամական խալիֆան չէ։ Մենք այժմ բացի մահմեդականութեան անունից ոչ մի բանի տէր չենք։ Անօգուտ է լաց լինել, խնդրագիրներ տալ։ Ռուսաստանից ստացուած վերջին հեռագրների համաձայն՝ այժմ, Կովկասում, մահմեդականները իրանց հայ հայրենակիցների հետ միմիանց սպանելով զբաղուած են։ Այս վայրենութեան պատճառը ի՞նչ է, եթէ ոչ տգիտութիւնը։ Ժամանակը՝

գիտութեան, արուեստների, վաճառականութեան ժամանակ է։ Բայց արէք ձեր աչքերը։ Սովորեցէք ռուսերէն, ֆրանսերէն և այլ լեզուներ, և ձեր զաւակներին սովորեցրէք. ընկերութիւններ կազմեցէք։ Եթէ այսպէս տգէտ մնանք, ոչ թէ Ռուսաստանում, այլ Եւրոպայի ամենաազատ և ամենարդարադատ երկրում անդամ մեր բաժինը անարդարութիւնից բացի ուրիշ բան չի կարող լինել։

«Մի խօսքով կատարեալ տխրութեամբ կարդացած ձեր խնդրագրի մի քանի մասերում դուք շատ իրաւացի էք։ Բայց այդ իրաւունքները ձեռք բերելու համար անհրաժեշտ եղող միջոցների ընտրութեան մէջ սխալւում էք։»

Թուրք օրգանի այս շատ իրաւացի և շատ խելօք խորհրդածութիւններից յետոյ, մենք կ'ուզէինք շեշտել հետևեալ կարևոր կէտի վրայ։

Մահմեդականները անդադար կրկնել են որ թիւրքահայերը աններելի յանցանք են գործել Սուլթանի կառավարութեան կողմից իրանց կրած անլուր հարստահարութիւնների և տանջանքների դէմ բողոքելով Եւրոպային։ Նրանք այդ դիմումով իբրև թէ կամեցել են Եւրոպայի միջոցով պատառ պատառ անել տալ Թիւրքիան։ Այժմ նոյն քայլն են անում և իրանք. այդ «ամենահաւատարիմ հպատակները» դիմում են օտար պետութիւններին։ Մեկնութիւններն տեսլորդ են...

Տ. Զաւէն